Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

474
89
С 492 бл/781

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՈՒՐ Է ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՎ։

ԱՐՀԱԿՈՒՐԴ ԳՆԱՑՈՂԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

394
Ա-89
БИБЛИОТЕКА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Ակկ (բ) Բկ կից Բաղվի շեֆհանձնաժողով։

ԻՆՉՊԵՍ ՊԻՏԻ ԳՐԵԼ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ՈԳՏՎԵԼ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

1. Հույս մի դնի հիշողության վրա, գրիր հիշատակարանիդ մեջ են բոլորը, ինչ վոր նկատես, ինչ վոր պարզվի խոսակցության ժամանակ։
2. Հիշատակարանումդ գրիր կանոնավոր և ամեն որ։
3. Մի գրիր չստուգված լուրերը, գրիր միայն են, ինչ վոր ինքդ տեսնում ես։
4. Հարազատ գյուղիդ բոլոր անկյունները դիտիր և գրիր գլխավոր բաները, բայց կարճ։
5. Են հարցերը, վոր դու չես կարողացել բացատրել գյուղացիներին, նշանակիր հիշատակարանիդ մեջ։ Քաղաք գալուց հետո կտանաս պատասխանը և նամակով կգրես հարց տվողներին։
6. Ցեթե կարողանաս քո հիշատակարանում բազմակողմանի լուսաբանել հարազատ գյուղի կենցաղը, հենց դրանով կոգնես բոլոր թերությունների վերացնելուն։
7. Քաղաք գալուց հետո հիշատակարանդ տուր «Քաղաքի և գյուղի կապի բյուրոյին։ Այնտեղ նա նյութ կդառնա գյուղում աշխատելու համար։

ՆԱԿԱԶ ԱՐՁԱԿՈՒՐԴ ԳՆԱՑՈՂ ԲԱՆՎՈՐԻՆ

06 APR 2010
Ca 1503

Արձակուրդ գնացող բանվոր,

ԹԱՆԿԱԳԻՆ ԸՆԿԵՐ,

Կարևոր խնդիրներից մեկը, վոր դրված է վոչ միայն Կոմունիստական կուսակցության այլև ամբողջ բանվորական դասակարգի առաջ, գյուղի հարցն է. այսինքն քաղաքի կապը գյուղի հետ, բանվորի կապը գյուղացու հետ ամեն կերպ ամրացնելու հարցը, վորպես սոցիալիստական շինարարության անհրաժեշտ հիմունք։

Դու համոզված ես, վոր մեր հաղթանակը թշնամու վրա, Հոկտեմբերի գրավումները քաղաքում նաև գյուղում պահպանելը և ամրապնդումը, մեր տնտեսության և արդյունաբերության բարձրացումը պայմանավորված են յեղել բանվորների և գյուղացիների միությունով։

Բեզ հայտնի է, վոր գյուղը դեռևս մեծ մասամբ անգրագետ և քիչ կուլտուրական է, նա չունի հարկավոր քանակությամբ փորձված գործիչներ, խորհուրդներում, ուսուցիչներ, գյուղատնտեսներ և այլն. եդ բոլորը նրան հետ և քաշում նոր գյուղի շինարարության գործից։

Գյուղը ճանաչում է բանվոր դասակարգին, վորպես հեղափոխության և նոր կյանքի կառուցման դեկավարի. գյուղում յերևացող ամեն մի բանվորից գյուղացին, բնականաբար, պատասխանի է սպասում՝ իրեն հուզող բոլոր հարցերի վերաբերմամբ։

Գյուղացիներն անբավական են մնում, յերբ գյուղ յեկած բանվորները չեն ուզում կամ չեն կարողանում գյուղացիական մասսաների եդ պահանջը բավարարել։

Հիշիր, վոր եդպիսի պայմաններում պրոլետարիատի խնդիրը կայանում է նրանում, վորպեսզի եդ միությունն ավելի ու ավելի ամրանա։ Բայց միայն բանվոր դասակարգի դեկավարությամբ և ոգնությամբ գյուղը կարող է դուրս գալ են խավարից և աղքատությունից, վորոնց մեջ նա յեղել է կապիտալիստների և կալվածատերերի որով։

Գալիս է ամառը, յերբ բանվորները, զանազան բարձրագույն դպրոցներում և բանֆակներում սովորողները հազարներով արձակուրդ են գնում դեպի գյուղերը։

Արձակուրդով գյուղ գնացող յուրաքանչյուր առաջավոր բանվոր, ուսանող, կարմիր բանակային և այլն, վոր լավ ծանոթ է Խորհրդային Միության դրությանը, գյուղում կարող է ոգնել գյուղացուն կուսակցական, խորհրդային և հասարակական աշխատանքների մեջ։

Արձակուրդով գյուղ գնացող բանվորը պիտի դառնա պրոլետարական ազդեցության իսկական հաղորդիչը, կուսակցության վորոշումների և Խորհրդային իշխանության կարևոր գործողությունների մեկնաբանողը—գյուղացիական տնտեսության զարգացման և ամրապնդման վերաբերմամբ, կոոպերատիվ շինարարության, գյուղի կուլտուրական—քաղաքական մակարդակի բարձրացման մասին. նա պիտի գյուղացիությանը հաղորդակից անի բանվորագյուղացիական պետության ներքին և արտաքին քաղաքականությունն մեկնաբանելուն։

БИБЛИОТЕКА
ИН СТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

89

Արձակուրդ գնացող բանվոր,

Հետևիր Իլիչի ավանդներին։ Նա շատ անգամ է ցույց տվել, թե կարևոր և անհրաժեշտ է ոգնել գյուղացիությանը՝ նրա կուլտուրական և քաղաքական զարգացման ընթացքում։ Իլիչը մեզ սովորեցրել է ամեն միջոցներով պաշտպանել բանվորների և գյուղացիների կապի ամրությունը և ոգնել գյուղին բանվոր դասակարգի առաջավոր հեղափոխական ուժերով։

Ամեն մի արձակուրդով գյուղ գնացող պիտի հասկանա նրա վրա դրված աշխատանքի կարևորությունը և լրջությունը. նա պիտի իր հետ տանի անհրաժեշտ տեղեկությունները և գրքերը, վոր կարողանա իրենից պահանջվող ոգնությունը հասցնել գյուղին խելացի և ուղիղ։

Գյուղում սերտ կապ ունեցիր տեղական կուսակցական, խորհրդային և հասարակական կազմակերպությունների հետ ու գործիր նրանց ղեկավարությամբ. եղ դեպքում գյուղում կատարած քո աշխատանքը կտա ամենալավ արդյունքները։

Մի մոռանա, վոր թեկուզ մի գյուղացու ակտիվ աշխատանքի քաշելը, կլինի պրոլետարիատի մեծ և արժեքավոր հաղթանակը։

Հիշիր, վոր քեզնից հետո դու պիտի գյուղում թողնես կազմակերպված առաջավոր գյուղացիներ։ Սակայն մի տա ահարկավոր խոստումներ։

Քո անելիքն է գործի քաշել հենց իրենց, գյուղացիներին։ Կարողացիր գյուղում գտնել վոչ միայն թերություններ և վատ կողմեր, այլև սոցիալիստական տնտեսության, խորհրդային հասարակայնության նոր ձիլեր։ Գյուղական կյանքի թերությունների և մութ կողմերի հետ ամենից լավ կարելի է կռվել՝ տնտեսության նոր, խորհրդային և սոցիալիստական ձևերը և խորհրդային կյանքի նոր ձիլերն ամրացնելով։

Արձակուրդ գնացող բանվոր, հիշիր, վոր վերադառնալուց հետո դու պիտի պատմես քո ընկեր բանվորներին, թե ինչպես է ապրում և պայքարում խորհրդային գյուղը՝ նոր, ավելի լավ կյանքի համար։

ԲԱՂԱՖԻ և ԳՅՈՒՂԻ ԿԱՊԻ
ԲԱԳՎԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԻՆՉՈՎ ՊԻՏԻ ՀԵՏԱՔՐՔՐՎԻ ԱՐՁԱԿՈՒՐԴ ԳՆԱՑՈՂԸ ԳՅՈՒՂՈՒՄ

23 FEB 2013

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Արձակուրդ գնացողը պիտի հիշի, որ Խորհրդային իշխանության հիմնական խնդիրը գյուղի շինարարության գործում պիտի լինի են, որ գյուղացին իր տնտեսության մեջ կատարելագործված ձևեր մտցնի. կարողանա ստանալ ամենամեծ բերքը և յեկամուտը շնորհիվ մեքենաների, ցանքսի ձևի, սերմերի ընտրության, ավելի արժեքավոր գյուղատնտեսական կուլտուրաների անցնելուն, անասուններին լավ խնամելուն և այլն։

Արձակուրդ գնացողը պիտի հետաքրքրվի՝ բարձրանում է, արդեոք, գյուղացիական տնտեսությունը և ինչպես են գյուղ մուտք գործում տնտեսության նոր, կուլտուրական ձևերը։

Գործադրվում է, արդյոք, հավաքական ուժերով հող մշակելը, գործադրվում են, արդյոք, մեքենաներ։ Շատ են դրանք թե քիչ, ինչպես են դրանք գյուղ հասցրվում։ Ո՞վ է գյուղին տալիս և ինչ պայմաններով։

3171-91

ԳՅՈՒՂՈՒՄ

Գյուղի սոցիալիստական շինարարության, նրա սոցիալիստական վերակազմության հարցը վոչ մի դեպքում չի կարելի քննել արդյունաբերությունից չեղոքացած կերպով։ Տրաքտորները, գյուղական տնտեսության ելեքտրիֆիկացիան, հողը շահագործող խոշոր ձեռնարկներ կազմակերպելու հնարավորությունը — ես բոլորը պիտի կապված լինի գյուղացիական տնտեսությունը ծնվող սոցիալիստական հարաբերությունների շրջանակը մտցնելու հիմնական մեթոդի հետ՝ գյուղացիության մասսայորեն կոոպերացիայի մեջ մտցնելու միջոցով։

ՌԻԿՈՎ

ԳՅՈՒՂԻ ՇԵՐՏԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Արձակուրդ գնացողը պիտի հիշի, վոր գյուղացիությունը միատեսակ չի. նրա մեջ կան կուլակներ, համ եվ չքավորներ։

Պիտի գիտել, թե ինչպես և կատարվում գյուղի շերտավորումը։ Զպիտի մոռանալ, վոր կուլակը գյուղում շահագործող և, վաշխառու, առևտրական, նրան չպիտի շփոթել կարողության տեր և միջին գյուղացիության հետ, վորոնք մշտապես չեն շահագործում ուրիշի աշխատանքը։

Հետաքրքրվիր, թե վոքրքան մեծ և կուլակի ազդեցությունը միջակ գյուղացու և չքավորի վրա, և թե ինչով ու ինչպես և կուլակն եդ ազդեցությունը պահում։

Ն՝ գյուղացին, վոր ոգտվում և խորհրդային կարգերից՝ իր տնտեսությունն ուժեղացնելու համար, խորհրդային վարկն ոգտագործում և տնտեսությանն մակարդակը բարձրացնելու համար, աշխատում և, վոր լավացած տնտեսության շնորհիվ իրա կուլտուրական պահանջները զարգանան,—նա դեռևս կուլակ չի։ Կուլակը նա և, ով շահագործում և ուրիշի աշխատանքը, ով ուրիշին պարտքի մեջ և ձգում և ոգտվում և անվճար աշխատանքով։

Լ. Բ. ԿԱՄԵՆՅԵՎ

ՄԻՋԱԿԸ, ՆՐԱ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Արձակուրդ գնացողը չպիտի մոռանա, որ յեթե չքավորը, իսկ ամենից առաջ բատրակը, պրոլետարիատի հենակետն է գյուղում, միջակը նրա հասատատուն դաշնակիցն է, մանավանդ որ հողը անցել է գյուղացիության ձեռքը և միջին կարողության տեր մասսան կազմում է գյուղի հիմնական մասսան։ Արձակուրդ գնացողը պիտի դիտի, թե ում կողմն է գյուղի միջին մասսան։ Ո՞ւմ է նա պաշտպանում՝ չքավորին թե կուլակին և ինչու։ Միջին գյուղացին ինչպիսի մասնակցություն ունի գյուղխորհրդին, կոոպերացիային, գյուղացիական կոմիտեներին, մեքենական ընկերություններին և նա ինչ ազդեցություն ունի եղ որդաններում։

Արձակուրդ գնացողն ինքը պիտի լինի ամեն տեղ, դիտի թե վրից են գործում այդ որդանները. գրուցի նրանց գործունեության մասին գյուղացիական ակտիվի հետ, որը անմիջապես մասնակցում է գյուղխորհրդի, կոոպերացիայի և ուրիշ որդանների գործերին, և պարզի նրա կարծիքը գյուղի շինարարության մասին։

ԳՅՈՒՂԻ ԿՅԱՆՔԻ ՎՐԱ

Այժմ հիմնական խնդիրը գյուղում են է, որ պայքար է մղվում միջակ գյուղացուն գրավելու, միջակին կուլակից կտրելու, կուլակին չեզոքացնելու համար, միջակի հետ ամուր միություն կազմելու միջոցով։

Բ. Վ. ՍՏԱԼԻՆ

ՉՔԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՆՐԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ

Չքավորությունը գոնվում է ծանր վիճակում, մանավանդ յերբ կուլակն աճում է։ Մենք պետք նրան ոգնենք կազմակերպչորեն, քաղաքականապես և տնտեսապես, բայց վոչ թե «կոմբեդ»-ներին դառնալու միջոցով, վոչ թե զինվորական կոմունիզմի ճնշումով. այլ չքավորությանը կազմակերպելով խորհուրդների, կոոպերացիայի, գյուղացիական կոմիտեների, կոլեկտիվ տնտեսությունների, արտելների և զանազան ընկերությունների մեջ։ Նրան եղ որգանների շուրջը միացնելով միջակ գյուղացու հետ՝ պայքարելու կուլակի դեմ, պիտի հետաքրքրվել, թե վիրքան և չքավորների թիվը գյուղում, ինչ չափով են նրանք կազմակերպված գյուղի հասարակական որգանների շուրջը և ինչպիսի մատակցություն են ցույց տալիս նրանց։ Ինչով և զբաղվում չքավորությունը. քաղաք և գնում աշխատանքի, իր հողը կապալով և տալիս, թե իր տնտեսությամբ և զբաղվում։ Վիրն են նրա պահանջները, վորտեղից և ինչ ձևով և նա ոգնություն ստանում։ Չքավորությունն, արդյոք, հեղինակություն ունի գյուղում, կազմակերպված և նա միջակ գյուղացու հետ։

ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Պիտի հնարավորություն տալ չքավորությանը, վորպեսզի նա, վերջապես կարողանա վոտքի յելնել, վորպեսզի նա կոմունիստական կուսակցության և պետության ոգնությամբ խմբերի մեջ կազմակերպվի, սովորի խորհուրդների, կոոպերացիայի, գյուղացիական կոմիտեների և գյուղական հասարակության բոլոր ասպարեզներում պայքարել կուլակի դեմ. բայց պայքարի վոչ թե Պետական Քաղաքական Վարչությանը դիմելով, այլ քաղաքական պայքարի, կազմակերպված պայքարի ճանապարհով։

Ի. Վ. ՍՏԱԼԻՆ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Հայկական ՍՍՀ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ

ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴԻ ՅԵՎ ՆՐԱ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Խորհրդային շինարարության հիմնական խնդիրն է՝ աշխուժացնել խորհուրդը գյուղում։ Նրան վոտքի կանգնեցնել, նրա մեջ գրավել գյուղացիության ամենալավ տարրերը, նրա շուրջը ստեղծել գյուղացիական անկուսակցական ակտիվ։ Արձակուրդ գնացողը պիտի իմանա, վոր գյուղխորհրդի և նրա սեկցիաների աշխատունակությունից է կախված գյուղի բարեշինությունը և նրա տնտեսության աճումը։ Պիտի հետաքրքրվել, թե ինչպես է գործել հին գյուղխորհուրդը։ Վիրքան աշխուժ են անցել նոր գյուղխորհուրդի ընտրությունները։ Արդյոք ամբողջ բնակչությունը մասնակցել է ընտրություններին և ով է ակտիվ յեղել՝ կուլակը, միջակը թե չքավորը։ Միացած են յեղել միջակները և չքավորները վերընտրությունների ժամանակ։ Ի՞նչպես է գործում նոր գյուղխորհուրդը։ Հեղինակություն ունի նա։ Գյուղացիությունն, արդյոք, ակտիվ կերպով մասնակցում է գյուղխորհրդի սեկցիաների աշխատանքներին։ Եղ բաները պարզելու համար պիտի զրուցել շարքային գյուղացու հետ և պարզել, թե նա վիրքան է հետաքրքրվում գյուղխորհրդով և ինչ վերաբերմունք ունի դեպի նրա գործունեությունը։ Պիտի զրուցել Խորհրդի գործիչների հետ, թե ինչ կարիքներ ունի խորհուրդը, ինչ պլաններ և հնարավորություններ։

Յերկրորդ խնդիրը կայանում է նրանում, վոր ստիճանաբար, բայց անշեղ կերպով անցկացվի՝ վարչական ազդեցության և ղեկավարության հին ձևերի լիկվիդացիայի գիծը գյուղում, խորհուրդների կենդանացման գիծը, նրանց իսկական ընտրական որգաններ դարձնելու գիծը և գյուղում խորհրդային դեմոկրատիան մտցնելու գիծը։

Գյուղում խորհրդային դեմոկրատիա մտցնելը և խորհուրդների կենդանացնումը մեզ հնարավորություն պիտի տա վերակազմելու մեր պետական ապարատը, կապելու նրան ժողովրդական մասսաների հետ, դարձնելու առողջ և ազնիվ, հասարակ և եժան, վորպեսզի կարելի լինի ստեղծել պայմաններ՝ պրոլետարիատի դիկտատուրայով կառավարվող հասարակությունից հեշտությամբ անցնելու առանց պետության, կոմմունիստական հասարակության։

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՈՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Հեղափոխական որինականության հիմնավորումը գյուղում—Խորհրդային իշխանության խնդիրներից մեկը պիտի լինի։ Պիտի իմանալ, վոր գյուղացիների անբավականությունը Խորհրդային իշխանությունից լինում է վոչ թե նրա համար, վոր եդ իշխանությունը վատ է, չի պաշտպանում նրանց շահերը, այլ նրա համար, վոր գյուղի առանձին գործիչները աղավաղում են հեղափոխական որինականությունը. ինքը գյուղացին որենքները չի իմանում և որենքները գործադրվում են առանց նրանց նշանակությունը բացատրելու գյուղացիներին։

Արձակուրդ գնացողը պիտի դիտի, թե ինչպես են իրագործվում խորհրդային որգանների դեկրետները և կարգադրությունները։ Գիտեն գյուղացիները որենքները, ով է նրանց բացատրում։ Վատ չի լինի գյուղացու հետ զրուցել թե ինչպես է գործում գյուղական դատարանը, պարզել անբավականության պատճառները, և թե դիտեն արդյոք եդ մասին դեկավար որգանները, ինչ միջոցներ են ձեռք առնում։

Չպիտի շատ տարվել գյուղացիների ատարհայտած անբավականությամբ և խոստումներ տալ նրանց, պիտի գնահատապատասխան որգանները, խոսել դեկարար գործիչների հետ և պարզել գյուղացիների գանգատների իսկությունը։

Մեր խնդիրը կայանում է նրանում, վորպեսզի բնակչության բոլոր խավերն ունենան են իրավունքները, ինչ վոր անհրաժեշտ է մեր շինարարության շահերի տեսակետից։ Յուրաքանչյուր կոմմունիստի, իշխանության յուրաքանչյուր ներկայացուցչի պարտականությունը պիտի լինի պաշտպանել են որենքները, վոր մենք հրատարակում ենք։

ՍՈՅԼՅ

ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Արձակուրդ գնացող, հիշիր վոր գյուղական տնտեսությունը բարձրացնելու և գյուղացիության նիստ ու կացը լավացնելու համար ձեռք առած միջոցների հաջողությունը կախված է կոոպերացիայի (գյուղատնտեսական, վարկային, զբաղմունքային և սպառողական) աշխատելու ընդունակությունից և հենց ազգաբնակչության մասնակցությունից նրա մեջ։ Մեր խնդիրը գյուղում են է, վոր գյուղացիությանը հասկացնենք կոոպերացիային մաղնակցելու ոգուտները, վորպեսզի կոոպերացիան գյուղացու համար դառնա են, ինչ վոր արհմիությունը բանվորի համար։

Հետաքրքրվիր, վոնց է գործում կոոպերացիան, գյուղացուն անհրաժեշտ բավականաչափ ապրանքներ ունի՞, նկատի՞ է առնում նա գյուղացիության շահերը, նպաստում է գյուղական տնտեսության բարձրացմանը, ինչ մասնակցություն է ցույց տալիս բնակչությունը կոոպերացիայի աշխատանքին և ո՞վ է ավելի ակտիվ մասնակցում՝ կուլակը, միջակը, թե չքավորը. վատնումներ և ուրիշ չարագործություններ լինում են, ինչ միջոցներ են ձեռք առնում դրա դեմ կուսակցության և խորհրդային տեղական կազմակերպությունները և ինչպես է վերաբերում գյուղացիությունը։ Կուսակցական և կոմսոմոլի բջիջների ազդեցությունը և ղեկավարությունը նկատվում է կոոպերացիայի աշխատանքներում։

Իսկապես ասած, մեզ ՝ինում է միայն մի բան, դարձնել մեր ազգաբնակչությունն ենքան «քաղաքակրթված», վորպեսզի նա հասկանա կոոպերացիային գլխովին մասնակցելու բոլոր ոգուտները և կարդի բերի եզ մասնակցությունը։

Վ. Ի. ԼԵՆԻՆ

Պրոլետարական պետությունը մանր և միջին գյուղացիության գրությունը հեշտացնելու համար պիտի անի են բոլորը, ինչ վոր կարող է, ինչ թույլ են տալիս հեղափոխության զարգացման ընդհանուր պայմանները. դրա հետ միասին նա պիտի միջոցներ ձեռք առնի գյուղացիական տնտեսությունները կոոպերացիայի յենթարկելու համար, պիտի անի են, ինչ կնախապատրաստի գյուղական տնտեսության մեջ լավ տեխնիկա մտցնելու հիմքերը. հենց դրանով էլ կնախապատրաստվի աստիճանաբար և կամավոր կերպով խոշոր, կոլեկտիվ գյուղական տնտեսության անցնելու գործ։

Վ. ՄՈԼՈՏՈՎ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Գյուղի բարեկարգությունը կախված է գյուղացիության կուլտուրական մակարդակից, նրա ակտիվ և ինքնուրույն մասնակցությունից՝ խրճիթ—ընթերցարանի, գրագիտական դպրոցի, հիվանդանոցի, դպրոցի, կոոպերացիայի, բատրաչկոմի և ուրիշ հասարակական կազմակերպությունների աշխատանքներին։ Պետք լինել եղ կազմակերպություններում։ Դիտել նրանց աշխատանքը։ Ամուր են կապված մասսայի հետ, արտահայտում են նրա տրամադրությունները։ Ո՞վ և գյուղում ամենից շատ դեպի հասարակական աշխատանք քաշված՝ յերիտասարդությունը, կանայք, ուսուցիչը, բժիշկը, թե՞ չափահաս գյուղացին։ Առանձնապես ուշք պետք դարձնել բատրակների աշխատանքին. նրանց խմբված լինելուն իրենց պրոֆկազմակերպության շուրջը։ Յեթե անհրաժեշտ է նրանց աջակցիր, որ կազմակերպվեն Հողատատի միության մեջ։

Խորհրդային պետական ապարատը, եղ բառի ամենախոր իմաստով, բաղկացած է Խորհուրդներից ավելացրած բոլոր և ամեն տեսակի կուսակցական միությունների միլիոնանոց կազմակերպությունները, որ կապում են խորհուրդները ամենաներքին «խորքերի» հետ, որ ձուլում են պետական ապարատը միլիոնանոց մասսաների հետ և քայլ առ քայլ վոչնչացնում են ամեն մի արդելք՝ պետական ապարատի և աղքատակչության մեջ։

Ի. ՍՏԱԼԻՆ

ԿՈՄՍՈՄՈԼԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Գյուղում տնտեսությունը բարձրանալու հետ միասին ավելանում են նաև գյուղացի յերիտասարդության պահանջները։ Նա ուզում է գյուղատնտեսության հարցերին գիտակ լինել և գործնական գիտելիքներ իմանալ։ Նա ուզում է ավելի լավ տանել իր տնտեսությունը, դառնալ լավ տնտես՝ տնտեսության նոր ձևերին անցնելու միջոցով։ Նա ուզում է ունենալ խելացի, առողջ զվարճալիք։ Դրա համար պիտի աշխուժացնել կոմյերիտական բջջի ամբողջ աշխատանքը, աշխուժացնել նրանց ժողովները, քննել ետեղ գյուղխորհրդի, կոոպերացիայի, խրճիթ—ընթերցարանի գործունեությունները, գյուղատնտեսական կրուժոկներ և յերեկոյան կուրսեր կազմակերպելու խնդիրները։ Յեթե կոմսոմոլի բջիջները եդ բանը չանեն, ազդեցություն չեն կարող ունենալ գյուղի յերիտասարդության վրա։

Արձակուրդ գնացողը պիտի լինի կոմսոմոլի բջիջներում, նրանց ժողովներում, հետաքրքրվի նրանց կյանքով և գործունեությամբ, հիշելով, որ գյուղի կոմսոմոլի բջջի հիմնական խնդիրն և՝ ոգնություն ցույց տալ չքավորին։

Գյուղում ամենից ուժեղ և կենսական բջիջները նրանք են, վորոնք գործնական աշխատանք են տանում գյուղական տնտեսությունը բարձրացնելու գամար (գյուղատնտեսական կրուժոկների, կոոպերացիայի միջոցով, բլոկ գյուղատնտեսի հետ և այլն)։

Ամենից ուժեղ և աշխուժ ակումբները նրանք են, վորոնք տալիս են վոչ թե չոր, շաբլոնական նյութ, այլև կենդանի զվարճության վորոշ մթնիմում։

(XIV ԿՈՒՍՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱՁԵՎԻՑ)

ԿՈՄԲԶԻԶԸ, ՆՐԱ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՅԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Կուսակցության հիմնական խնդիրն է գյուղում—աշխուժացնել խորհրդի աշխատանքները, բարձրացնել կուլտուրլուսավորական աշխատանքը և կուսակցության շարքերը քաշել բատրակներին, չքավորներին և միջակների լավ, հեղափոխական մասին. դրա համար լայն գյուղացիական ակտիվ պիտի ստեղծել խորհուրդների, կոոպերացիայի և ուրիշ գյուղական կազմակերպությունների շուրջը։

Արձակուրդ գնացողը պիտի ծանոթանա, թե ինչպես և գործում կոմբջիջը, ինչպես և նա ղեկավարում գյուղական կազմակերպությունների աշխատանքը։ Ուսումնասիրում և նա XIV կուսհամագումարի վորոշումները, եդ վորոշումների մասին գիտե գյուղացությունը։ Կոմբջիջը վայելում և գյուղացիների վստահությունը. նա գյուղական տնտեսության լավացման և չքավորների կազմակերպիչն և, արդյոք։ Քննում և իր ժողովներում եդ հարցերը։ Դեպի այդ հարցերը գրավում և գյուղացիներին։ Իր ժողովներին գրավում և գյուղի անկուսակցական ակտիվին։ Պիտի զրուցել կոմունիստների և գյուղացիական ակտիվի հետ։ Բաժին հանել նրանց իրա փորձից, իրա գիտցածից, իսկ յեթե հարկավոր և, ոգնել նրանց իրենց աշխատանքը կատարելու։

Լենինն ասել և, թե կուսակցականների և անկուսակցականների փոխհարաբերությունները պիտի հիմնված լինին «փոխադարձ վստահության վրա»։ Լենինի ես խոսքերը չի կարելի մոռանալ։ Ստեղծել փոխադարձ վստահության պայմաններ կուսակցականների և անկուսակցականների միջև—ահա թե ինչն և անհրաժեշտ, ամենից առաջ նրա համար, վոր հնարավոր լինի անկուսակցական բազմամարդ ակտիվ համախմբել կուսակցության շուրջը։

Ի. ՍՏԱԼԻՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0237608

55.710

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
С. С. Р.

Печатано в типографии
Кооперативного Изд-ства
при БК АКП (б)
„Бакинский Рабочий“.

1964.

Заказ № 1458

Т